Հիսուս Քրիստոսի Ավետարանը

Ի՞նչ է Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Հիսուս Քրիստոսի ավետարանը մեր Երկնային Հոր ծրագիրն է՝ Իր զավակների երջանկության և փրկության* համար: Այն կոչվում է Հիսուս Քրիստոսի ավետարան, որովհետև այդ ծրագրի հիմնական կետը Հիսուս Քրիստոսի Քավությունն է: Իր ծրագրի համաձայն մեր Երկնային Հայրն ուղարկեց Իր Որդուն, Հիսուս Քրիստոսին, այս աշխարհ, որպեսզի ցույց տա մեզ, թե ինչպես պետք է իմաստալից ու երջանիկ կյանքով ապրել և այս կյանքից հետո հավերժական ուրախություն ունենալ: Հիսուս Քրիստոսի շնորհի ու ողորմածության շնորհիվ դուք կարող եք մաքրվել մեղքից և ունենալ խղճի խաղաղություն: Դուք կարող եք արժանի դառնալ այս կյանքից հետո Երկնային Հոր ներկայությամբ ապրելուն:

Այդ խաղաղությունն ու զորությունը ստանալու համար դուք պետք է սովորեք և հետևեք ավետարանի սկզբունքներին ու արարողություններին: Սկզբունքը ճշմարտություն է, որը կարող է կիրառվել կյանքում. արարողությունը սրբազան, հաստատված կարգով, քահանայության իշխանությամբ կատարվող գործողություն է, և հաճախ մեր Երկնային Հոր հետ ուխտի մեջ մտնելու միջոց: Ավետարանի առաջին սկզբունքներն են՝ հավատք առ Հիսուս Քրիստոս և ապաշխարություն: Ավետարանի առաջին արարողություններն են՝ մկրտություն և Սուրբ Հոգու ստացում:

ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՊՐԵԼ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆՈՎ, ԵԹԵ

- *ՀԱՎԱՏ ԶԱՐԳԱՑՆԵՔ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՆԴԵՊ:*
- *ԱՊԱՇԽԱՐԵՔ:*
- *ՄԿՐՏՎԵՔ և ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՍՏԱՆԱՔ:*
- *ՀԱՄԲԵՐԵՔ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ:*

Սովորելով ավետարանի առաջին սկզբունքների և արարողությունների մասին և հետևելով դրանց, դուք ձգտում եք ձեր հետագա կյանքում հետևել Քրիստոսի օրինակին: Այդ շարունակական հավատարմությունը կոչվում է «համբերել մինչև վերջ»:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Հիսուս Քրիստոսի ուսմունքներն ու Քավությունը Նրա ավետարանի կենտրոնում են:

Հավատք առ Հիսուս Քրիստոս

Հավատքը ամուր համոզվածություն է, որը մարդուն դրդում է գործելու: Հավատքը, որը տանում է դեպի մեղքերի թողություն, կենտրոնացած է Հիսուս Քրիստոսի վրա, որի Քավությունը հնարավոր է դարձնում թողությունը: Հավատքն առ Հիսուս Քրիստոս ավելի է, քան Նրան պասսիվ հավատալը: Դա նշանակում է՝ հավատալ, որ Նա Աստծո Որդին է, որ Նա տառապել է մեր մեղքերի, չարչարանքների և հիվանդությունների համար: Դա նշանակում է գործել այդ համոզմունքով: Հավատքն առ Հիսուս Քրիստոս մղում է ձեզ սիրել Նրան, վստահել Նրան և հնազանդվել Նրա պատվիրաններին:

> «ՏԻՐՈՋՆ ԱՊԱՎԻՆԻՐ ՔՈ ԲՈԼՈՐ ՄՐՏՈՎԸ, և ՔՈ ՀԱՄԿԱՅՈՂՈՒԹՅԱՆԸ ՄԻ ՎԱՏԱՀԻՐ: ՔՈ ԲՈԼՈՐ ԾԱՆԱՊԱՐՀՆԵՐՈՒՄԸ ԾԱՆԱՀԻՐ ՆՈՐԱՆ, և ՆԱ ԿՈՒՂՂԵ ՔՈ ԾԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ»:
>
> **Առակաց Գ.5–6**

Ապաշխարություն

Հավատքն առ Հիսուս Քրիստոս ձեր մեջ առաջացնում է ձեր կյանքը դեպի լավը փոխելու ցանկություն: Ուսումնասիրելով ավետարանը, դուք հասկանում եք, որ մեղանչել եք, կամ գործել եք Աստծո կամքին և ուսմունքներին հակառակ: Ապաշխարությամբ դուք փոխում եք այն մտքերը, ցանկությունները, սովորույթներն ու վարքը, որոնք ներդաշնակ չեն Աստծո ուսմունքներին: Նա խոստանում է, որ երբ դուք ապաշխարեք, Նա կների ձեր մեղքերը: Երբ դուք ապաշխարում եք.

Հասկանում եք, որ մեղանչել եք և խորապես ցավում եք ձեր կատարածի համար:

Դադարում եք կատարել այն, ինչը սխալ է, և ձգտում եք երբեք կրկին նույնը չանել:

Խոստովանում եք ձեր մեղքերը Տիրոջը և ներողություն եք խնդրում: Դա ազատում է ծանր բեռից: Եթե մեղանչել եք մեկ այլ անձնավորության հանդեպ, դուք նաև պետք է ներողություն խնդրեք այդ անձնավորությունից:

Հավատն առ Հիսուս Քրիստոս ավետարանի առաջին սկզբունքն է:



Փոխհատուցում եք Դուք կատարում եք այն ամենը, ինչ կարող եք, որպեսզի շտկեք այն խնդիրները, որոնք հնարավոր է ձեր գործողությունների արդյունքում են առաջացել:

Պահում եք պատվիրանները: Աստծո պատվիրաններին հնազանդվելը ձեր կյանք է բերում ավետարանի զորությունը: Ավետարանը ուժ կտա թողնելու ձեր մեղքերը: Պատվիրանները պահել նշանակում է՝ ծառայություն մատուցել, ներել մյուսներին և հաճախել Եկեղեցու հավաքներին:

Ճանաչում եք Փրկչին: Ապաշխարության ամենակարևոր մասը գիտակցելն է, որ ներումը գալիս է Հիսուս Քրիստոսի շնորհիվ: Երբեմն հնարավոր է զգաք, որ Աստված չի ների ձանր մեղքերը: Սակայն Փրկիչը տառապել է մեր մեղքերի համար, այնպես որ մենք կարող ենք ազատվել դրանցից՝ անգամ ձանր մեղքերից: Ճշմարիտ ապաշխարության արդյունքում ունենում ենք ներում, խաղաղություն, սփոփանք և ուրախություն:

Ապաշխարությունը միշտ չէ, որ մեծ փոփոխություններ է պահանջում: Հաճախ այն պարզապես պահանջում է մեծ պարտավորություն Աստծո կամքին համաձայն ապրելու համար: Ճշմարիտ ապաշխարությունը միշտ չէ, որ անմիջապես է կատարվում. եղեք համբերատար ինքներդ ձեր հետ, երբ ձգտում եք կատարել այն, ինչը ճշմարիտ է և աշխատում եք շտկել ձեր կատարած սխալները: Ապաշխարելով, դուք սրտի փոփոխություն կապրեք: Դուք այլևս չեք ցանկանա մեղանչել: Դուք կգիտակցեք, որ Աստծո զավակն եք և, որ դուք կարիք չունեք նույն սխալները կատարել կրկին ու կրկին: Ավելի կամրանա և կխորանա Աստծո կամքին հետևելու ձեր ցանկությունը:

ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ՍԽԱԼՆԵՐ ԵՆՔ ԿԱՏԱՐՈՒՄ: ԵՐԲԵՄՆ ՄԵՆՔ ՎՆԱՍՈՒՄ ԵՆՔ ՄԵԶ և ԼՈՒՐՋ ՎՆԱՍ ՀԱՍՑՆՈՒՄ ՄՅՈՒՍՆԵՐԻՆ ԱՅՆՊԵՍ, ՈՐ ՄԻԱՅՆԱԿ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ՈՒՂՂԵԼ ԴԱ: ՄԵՆՔ ԿՈՏՐՈՒՄ ԵՆՔ ԲԱՆԵՐ, ՈՐՈՆՔ ՄԻԱՅՆԱԿ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ: ԱՅՆՈՒՀԵՏև ՄԵՆՔ ԶԳՈՒՄ ԵՆՔ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՆՎԱՍՏԱՑՈՒՄ և ՏԱՌԱՊԱՆՔ, ՈՐԸ ՄԵՆՔ ՄԻԱՅՆԱԿ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԲՈՒԺԵԼ: ՔԱՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՔԻՆՈՂ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՐՄԱՆԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ:

Մկրտություն և Սուրբ Հոգին

Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը և ապաշխարությունը պատրաստում են ձեզ մկրտությանը և Սուրբ Հոգին ստանալուն: Հիսուս Քրիստոսն ուսուցանել է, որ ամեն ոք պետք է մկրտվի ջրով և Հոգով (Սուրբ Հոգով) մեղքերի թողության կամ ներման համար: Մկրտվելով, որը կատարում է քահանայության իշխանություն կրողը, և Սուրբ Հոգին ստանալով, դուք հոգեպես կվերածնվեք:

Ինչո՞ւ ես պետք է մկրտվեմ:

Հիսուս Քրիստոսը օրինակ եղավ մեզ համար մկրտվելով, որպեսզի «ամեն արդարություն կատարվի» (Մատթեոս Գ.15): Երբ դուք մկրտվում եք, մեղքերի թողություն եք ստանում (տես Գործք Բ.38): Դուք ուխտ եք կապում Աստծո հետ, կամ խոստանում եք Նրան. դուք խոստանում եք ընդունել Հիսուս Քրիստոսին որպես ձեր Փրկիչ, հետևել Նրան և պահել Նրա պատվիրանները: Եթե դուք պահում եք ձեր խոստումը, ձեր Երկնային Հայրը խոստանում է ներել ձեր մեղքերը: Երբ դուք մկրտվում եք ճիշտ իշխանությամբ, ձեր մեղքերը մաքրվում են:

> «ՀԻՍՈՒՍԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ. ՃՇՄԱՐԻՏ ՃՇՄԱՐԻՏ ԱՍՈՒՄ ԵՄ ՔԵԶ. ԵԹԵ ՄԵԿԸ ՋՐԻՑ և ՀՈԳՈՒՑ ՉԾՆՈՒԻ, ՆԱ ԿԱՐՈՂ ՉԷ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄՏՆԵԼ»:
>
> **Հովհաննես Գ.5**

Մկրտությունը կարճատև ընկղմում է ջրում: Այդպես է Հիսուս Քրիստոսը մկրտվել: Ընկղմամբ մկրտությունը Հիսուս Քրիստոսի մահանալու, թաղվելու և հարության սուրբ խորհրդանիշն է. որպես Հիսուս Քրիստոսի հետևորդ՝ այն ներկայացնում է ձեր հին կյանքի վերջն ու նոր կյանքի սկիզբը:

Ինչո՞ւ ես պետք է Սուրբ Հոգին ստանամ:

Եթե մկրտությունը լվանում է ձեր մեղքերը, ապա Սուրբ Հոգին սրբագործում, կամ մաքրագործում է ձեզ: Եթե հավատարիմ մնաք ձեր մկրտության ուխտերին, դուք կարող եք միշտ Սուրբ Հոգին ձեզ հետ ունենալ: Բոլոր լավ մարդիկ կարող են զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը, սակայն միայն

նրանք, ովքեր մկրտվել և ստացել են Սուրբ Հոգին, իրենց ողջ կյանքում Նրա մշտական ընկերակցության իրավունքն ունեն:

Սուրբ Հոգին օգնում է ձեզ ընդունել և հասկանալ ճշմարտությունը: Այն տալիս է հոգևոր ուժ և ոգեշնչում: Նա սփոփում է ձեզ դժվար պահերին և առաջնորդում է որոշումներ կայացնելիս: Սուրբ Հոգու միջոցով դուք կարող եք զգալ Աստծո սերն ու ազդեցությունը ձեր առօրյա կյանքում:

Աստծո պատվիրաններին հնազանդվելուց է կախված այս աստվածային պարգևը վայելելու ձեր ձիրքը: Սուրբ Հոգին չի կարող մնալ նրանց հետ, ովքեր չեն ապրում ըստ Աստծո ուսմունքների: Նրանք կորցնում են Նրա առաջնորդության և ոգեշնչման արտոնությունը: Միշտ ձգտեք լինել Սուրբ Հոգու ընկարակցությանն ու առաջնորդությանն արժանի:

> *ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿԱՐՈՂ Է ՈՒՍՈՒՑԱՆԵԼ և ԱՌԱՋՆՈՐԴԵԼ ՁԵԶ. «ՄԽԻԹԱՐԻՉԸ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ, ՈՐ ՀԱՅՐԸ ԿՈՒՂԱՐԿԵ ԻՄ ԱՆՈՒՆՈՎԸ, ՆԱ ԱՄԵՆ ԲԱՆ ԿՍՈՎՈՐԵՑՆԵ ՁԵԶ, և ԿՀԻՇԵՑՆԵ ՁԵԶ ԱՄԵՆ ԻՆՉ ՈՐ ՁԵԶ ԱՍԱՑԻ»:*
>
> **Հովհաննես ԺԴ.26**

Մկրտությունից հետո դուք ստանում եք Սուրբ Հոգին: Հաստատում կոչվող արարողության ժամանակ մեկ կամ մի քանի լիազորված քահանայություն կրողներ դնում են իրենց ձեռքերը ձեր գլխին: Նրանք հաստատում են ձեզ որպես Եկեղեցու անդամ և օրհնում են ձեզ, որպեսզի ստանաք Սուրբ Հոգին: Այս արարողությունը սովորաբար տեղի է ունենում մկրտությանը հաջորդող եկեղեցու ծառայության ժամանակ: Երբ մկրտվում և հաստատվում եք, դուք դառնում եք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Սուրբ Հոգին տրվում է ձեռնադրումով:

Հաղորդությունը

Մկրտվելուց հետո, դուք կարող եք վերանորոգել ձեր մկրտության ուխտերը ամեն շաբաթ հաղորդություն ընդունելով: Հաղորդության ծառայության ժամանակ հացն ու ջուրը օրհնվում և բաժանվում են ներկաներին՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի Քավության: Հացը ներկայացնում է Նրա մարմինը, իսկ ջուրը ներկայացնում է Նրա արյունը: Ձեզ խոստում ունեք, որ վերանորոգելով ձեր մկրտության ուխտերը, դուք միշտ ձեզ հետ կունենաք Հոգին, կամ Սուրբ Հոգին:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՆՈՒՄ Է ՁԵԶ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀԻՇԵԼ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՅԱՆՔԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՔԱՎՈՒԹՅՈՒՆԸ:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Հաղորդությունն օգնում է մեզ հիշել Հիսուս Քրիստոսին:

Համբերել մինչև վերջ

Դուք դառնում եք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ, առ Հիսուս Քրիստոս հավատի, ապաշխարության, և մկրտության ու հաստատման արարողություններիի միջոցով: Եկեղեցու անդամ դառնալով դուք կշարունակեք աճել հասկացողության մեջ: Դուք կշարունակեք հավատ գործադրել առ Հիսուս Քրիստոս, ապաշխարել և ընդունելով հաղորդությունը վերանորոգել ձեր մկրտության ուխտերը, և հետևել Սուրբ Հոգու առաջնորդությանը: Ավետարանի այդ առաջին սկզբունքներն ու արարողությունները օրինակ են, որին պետք է հետևել ամբողջ կյանքի ընթացքում: Կյանքի տևողություն ունեցող այս պարտավորությունը հաճախ կոչվում է «համբերել մինչև վերջ»:

Մինչև վերջ համբերելը ձեր կյանք է բերում առաջնորդություն, խաղաղություն և երջանկություն: Դուք ուրախություն կզգաք՝ փորձելով ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին, երբ ծառայեք և օգնեք ձեզ շրջապատող մարդկանց: Դուք ավելի լավ կհասկանք ձեր Երկնային Հոր հետ ունեցած ձեր հարաբերությունը և կզգաք Նրա կատարյալ սերը ձեր հանդեպ: Դուք կունենաք հույս ու նպատակ այս հաճախ դժբախտ ու անհանգիստ աշխարհում:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ԱՊՐԵԼԱԿԵՐՊ Է:

«ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԱՌԱՋ ՄՂՎԵՔ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀԱՆԴԵՊ ՀԱՍՏԱՏԱՄՏՈՒԹՅԱՄԲ՝ ՈՒՆԵՆԱԼՈՎ

ՀՈՒՅՍԻ ԿԱՏԱՐՅԱԼ ՊԱՅՇԱՌՈՒԹՅՈՒՆ, և ՍԵՐ՝

ԱՍՏՇՈ ՀԱՆԴԵՊ և ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ

ՀԱՆԴԵՊ: ՈՒՍՏԻ, ԵԹԵ ԴՈՒՔ ԱՌԱՋ ՄՂՎԵՔ,

ՄՆՎԵԼՈՎ ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՍՔՈՎ, և ՀԱՄԲԵՐԵՔ

ՄԻՆՉև ՎԵՐՋ, ԱՀԱ, ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՀԱՅՐԸ.

ԴՈՒՔ ԿՈՒՆԵՆԱ՛Ք ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԿՅԱՆՔ»:

2 Նեփի 31.20

Ինչպե՞ս կարող եմ ես իմանալ։

Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է Մարգարե Զոզեֆ Սմիթին և մյուս մարգարեներին տրված Աստծո հայտնության միջոցով։

Դուք կարող եք ինքնուրույն իմանալ, որ այս ամենը ճշմարիտ է, եթե աղոթքով հարցնեք ձեր Երկնային Հորը։ Նա կպատասխանի ձեզ Սուրբ Հոգու միջոցով, որը նաև կոչվում է Աստծո Հոգի։ Սուրբ Հոգին վկայում է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին։ Սուրբ Հոգին հաստատում է ճշմարտությունը՝ զգացողության, մտքի և տպավորության միջոցով։ Սուրբ Հոգուց եկած զգացումները զորավոր են, սակայն դրանք նաև սովորաբար նուրբ են և հանգիստ։ Ինչպես Աստվածաշունչն է ուսուցանում. «Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, [և] ժուժկալություն» (Գաղատացիս Ե.22–23)։

Այդ զգացումները հանդիսանում են Սուրբ Հոգուց հաստատում, որ տվյալ ուղերձը ճշմարիտ է։ Այդ ժամանակ դուք կարող եք ընտրել, թե ինչպես կարող եք ներդաշնակ ապրել Զոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված Հիսուս Քրիստոսի ավետարանին։

ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԵՍ ԱՂՈԹԵՄ։

- *ԴԻՄԵՔ ՁԵՐ ԵՐԿՆԱՅԻՆ ՀՈՐԸ։*
- *ՀԱՅՏՆԵՔ ՁԵՐ ՍՐՏԻ ԶԳԱՅՈՒՄՆԵՐԸ (ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՐՑԵՐԸ, ԽՆԴՐԵԼՈՎ ՀԱՍՏԱՏԵԼ, ՈՐ ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ և ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՆԱԾԸ ՃՇՄԱՐԻՏ Է)։*
- *ՓԱԿԵՔ ԱՂՈԹՔԸ («ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒՆՈՎ, ԱՄԵՆ»)։*

Անկեղծ աղոթքի միջոցով դուք կարող եք իմանալ ճշմարտությունը։

Տերմինների ցանկ

Արարողություն Սրբազան, հաստատված կարգով, քահանայության իշանությամբ կատարվող գործողություն: Օրինակ, մկրտությունը, Սուրբ Հոգու ստանալը և հաղորդությունը: Արարողությունները հաճախ Աստծո հետ ուխտի մեջ մտնելու միջոց են:

Հաղորդություն Արարողություն, որը Եկեղեցու անդամներին հիշեցնում է Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Հաղորդությունն ընդունելով մենք նորացնում ենք մկրտության ժամանակ կապած ուխտերը: Հացն ու ջուրը օրհնվում և բաժանվում են ներկաներին: Հացը ներկայացնում է Հիսուս Քրիստոսի մարմինը, իսկ ջուրը ներկայացնում է Նրա արյունը: Այս արարողությունը տեղի է ունենում ամեն շաբաթ հաղորդության ժողով կոչվող երկրպագության ծառայության ժամանակ:

Հաստատում Այս արարողությամբ մարդը ստանում է Սուրբ Հոգին: Այս արարողության ժամանակ, որը տեղի է ունենում մկրտությունից հետո հաղորդության ժողովին, տվյալ անձնավորությունը հաստատվում է, կամ դառնում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ:

Մկրտություն Էական քայլ մեղքերի թողություն ստանալու համար: Մկրտվելով և քահանայության իշխանությամբ հաստատվելով, մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ: Ընկղմամբ մկրտությունը նշանակում է, որ մկրտվող մարդը մի քանի վայրկյանով ընկղմվում է ջրի մեջ: Մկրտությունը ցույց է տալիս Քրիստոսի օրինակին հետևելու և Աստծո հետ ուխտեր կապելու մեր պատրաստակամությունը:

Շնորհ Աստվածային օգնություն և զորություն, որը տրվում է Հիսուս Քրիստոսի ողորմածության և սիրո շնորհիվ:

Նրա շնորհով, որը հնարավոր դարձավ Նրա Քավության միջոցով, ողջ մարդկությունը հարություն կառնի: Նրա շնորհով, նրանք, ովքեր շարունակ ապաշխարում են և ապրում ըստ Նրա ավետարանի, մշտապես մոտ կզգան իրենց Երկնային Հորը այս կյանքում, իսկ այս կյանքից հետո կապրեն Նրա ներկայության մեջ:

Ուխտ Համաձայնություն Աստծո և Նրա զավակների միջև: Աստված տալիս է ուխտի պայմանները, և մենք համաձայնվում ենք հնազանդվել Նրան: Աստված խոստանում է որոշակի օրհնություններ՝ մեր հնազանդության համար:

Փրկություն Մեղքից ու մահից ազատում: Փրկությունը հնարավոր դարձավ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Հիսուս Քրիստոսի Հարության միջոցով ամեն ոք կհաղթահարի մահվան հետևանքները: Հավատալով Հիսուս Քրիստոսին, մենք կարող ենք նաև փրկվել մեղքի ազդեցությունից: Այդ հավատքը կյանքում դրսևորվում է ապաշխարության, ավետարանի օրենքներին ու արարողություններին հնազանդվելու և Քրիստոսին ծառայելու միջոցով:

Քավություն Իրադարձություն, որը հնարավորություն է ընձեռում մեզ հաշտվել Աստծո հետ: Քավել նշանակում է պատիժ կրել մեղքի համար, որով ապաշխարող մեղսավորից հեռացվում է մեղքի ազդեցությունը: Հիսուս Քրիստոսը միակն էր, որը կարող էր կատարյալ Քավություն կատարել ողջ մարդկության համար: Նրա Քավությունը ընդգրկում էր Նրա տառապանքը մեր մեղքերի համար, Նրա արյուն հեղելը, Նրա մահն ու Հարությունը: Քավության շնորհիվ ամեն ոք, ով ապրել է, հարություն կառնի: Քավությունը նաև մեզ հնարավորություն է տալիս մեր մեղքերից թողություն ստանալ և հավերժ ապրել Աստծո հետ:

Լրացուցիչ ուսումնասիրություն

Հետևյալ հարցերն ու սուրբ գրությունները կօգնեն ձեզ ավելին սովորել այս բրոշյուրում տրված սկզբունքների մասին և խորհել դրանց շուրջ: Ցանկը ամբողջական չի. սուրբ գրությունների տողատակի ծանոթագրությունները և խաչաձև վկայակոչումները կուղղորդեն ձեզ լրացուցիչ հատվածներին ու աղբյուրներին:

Ի՞նչ է Հիսուս Քրիստոսի ավետարանը:
3 Նեփի 27.13–22 (Մորմոնի Գիրք, էջ 512–513)

Ի՞նչ է նշանակում հավատ ունենալ:
Ինչպե՞ս կարող է հավատն ուժ տալ ձեզ:
Եբրայեցիս ԺԱ.1, 6 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)
Ալմա 32.21, 26–28 (Մորմոնի Գիրք, էջ 314–315)
Եթեր 12.6 (Մորմոնի Գիրք, էջ 569)

Ի՞նչ է նշանակում ապաշխարել:
Ինչո՞ւ պետք է ամեն ոք ապաշխարի:
Ղուկաս 15.3–10 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)
Գործք Գ.19 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)
Ալմա 12.33–34 (Մորմոնի Գիրք, էջ 255)

Ինչո՞ւ պետք է ամեն ոք մկրտվի։
Գործք Բ.38 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)
2 Նեփի 31–32 (Մորմոնի Գիրք, էջեր 112–116)

Ի՞նչ է Սուրբ Հոգին։
Ինչպե՞ս կարող է Սուրբ Հոգին օրհնել ձեր կյանքը։
2 Նեփի 32.5 (Մորմոնի Գիրք, էջ 116)
3 Նեփի 27.20 (Մորմոնի Գիրք, էջ 513)

Ո՞րն է հաղորդության նպատակը։
3 Նեփի 18:1–12 (Մորմոնի Գիրք, էջ 496–497)
Մորոնի 4–5 (Մորմոնի Գիրք, էջեր 580–581)

Ի՞նչ է նշանակում համբերել մինչև վերջ։
2 Նեփի 31.15–20 (Մորմոնի Գիրք, էջ 115)
3 Նեփի 15.9 (Մորմոնի Գիրք, էջ 489)

Երկրպագեք մեզ հետ

Եկեք և տեսեք, թե ինչպես կարող է Վերականգնված Ավետարանը օրհնել ձեր կյանքը

Հաղորդության ժողովը երկրպագության հիմնական ծառայությունն է: Այն սովորաբար տևում է մեկ ժամից մի փոքր ավել և հիմնականում բաղկացած է հետևյալ մասերից.

Օրհներգեր. Երգում են ներկա գտնվողները: (Հիմների գրքերը տրամադրվում են:)

Աղոթքներ. Ասում են Եկեղեցու տեղի անդամները:

Հաղորդություն. Հացն ու ջուրն օրհնվում և բաժանվում է ներկաներին՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի Քավության:

Բանախոսներ. Սովորաբար նախապես նշանակված մեկ կամ երկու անդամներ խոսում են ավետարանի թեմաներով:

Հագուստ. Տղամարդիկ և տղաները հիմնականում հագնում են կոստյում կամ գեղեցիկ տաբատ, վերնաշապիկ և փողկապ: Կանայք և աղջիկները հագնում են զգեստ կամ կիսաշրջազգեստ:

Երկրպագության ծառայությունների ընթացքում նվիրատվություններ կատարելու անհրաժեշտություն չկա:

Մենք նաև հրավիրում ենք ձեզ հաճախել մյուս ժողովներին, ըստ ձեր հետաքրքրությունների և տարիքային խմբի: Այդ ժողովների հերթականությունն ու առկայությունը կարող է տարբեր լինել:

Կիրակնօրյա Դպրոց. Դասեր սուրբ գրություններն ու ավետարանի վարդապետություններն ուսումնասիրելու համար:

Քահանայության Ժողովներ. Դասեր 12 և բարձր տարիքի տղամարդկանց և տղաների համար:

Սփոփող Միություն. Դասեր 18 և բարձր տարիքի կանանց համար:

Երիտասարդ Կանայք. Դասեր 12–18 տարեկան աղջիկների համար:

Երեխաների Խումբ. Խմբային դասեր 3–11 տարեկան երեխաների համար: 18 ամսականից մինչև 3 տարեկան երեխաների համար հաճախ գործում է մանկական սենյակը:

Հաղորդության ժողովի ժամերը. _____

Հավաքատան հասցեն. _____

_____

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԵՍ ԱՆԵՄ:

- ԿԱՐԴԱՑԵՔ ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ:
  ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. _____

- ԱՂՈԹԵՔ՝ ԻՄԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՁԵՐ ՓՐԿԻՉՆ Է:

- ԱՊԱՇԽԱՐԵՔ և ԱՂՈԹԵՔ ՁԵՐ ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:
  ՁԳՏԵՔ ԱՊՐԵԼ ԱՍՏԾՈ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐՈՎ:

- ՀԱՃԱԽԵՔ ԵԿԵՂԵՑԻ:

- ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՄԿՐՏՎԵԼ _____

- ԱՅՑԵԼԵՔ WWW.MORMON.ORG, ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԱՎԵԼԻՆ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

- ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ՀԱՆԴԻՊԵԼ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻՆ՝ ՄԵՐ ՕՐԵՐԻ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՍՏԾՈ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՎԵԼԻՆ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

  ՀԱՋՈՐԴ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ. _____

  ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱԽՈՍԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ.

_____

_____

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

www.mormon.org

Նկարներ
Կազմի առաջին էջը՝ Հատված *Կենդանի Ջուրը* նկարից, Սայմոն Դյուիի: © Simon Dewey. Մի բազմացրեք:
էջ 2՝ Հատված *Լեռան Քարոզը* նկարից, Կարլ Հեյնրիխ Բլոխի: Օգտագործվում է ֆրեդերիխսբորգի Ազգային Պատմական Թանգարանի թույլտվությամբ, Հիլերոդ, Դանիա
էջ 5՝ *Քրիստոսը կենդանացնում է Հայրոսի դստերը*, Գրեգ Ք. Օլսեն: © Greg K. Olsen
էջ 6՝ *Հեզ Բժշկողը*, Գրեգ Ք. Օլսենի: Greg K. Olsen. © Conceptions Unlimited Investments, Inc. Մի բազմացրեք:
էջ 9՝ *Հովհաննես Մկրտիչը մկրտում է Հիսուսին*, Գրեգ Ք. Օլսենի: © Greg K. Olsen. Մի բազմացրեք:
էջեր 11, 12, 16, 22, 23 Marina Lukach

© 2005 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in Germany. Անգլերենի հաստատումը՝ 11/05: Թարգմանության հաստատումը՝ 11/05: *The Gospel of Jesus Christ*-ի թարգմանությունը: Armenian.

ARMENIAN
4 02011 34201 6
01134 201